Հավելված N 7
2021թ. «փետրվար» «16»
N ԴՏՊ-1160-11006/Ե պայմանագրի

Ծրագրի եռամսյակային հաշվետվություն՝ 1-ին եռամսյակ 2021թ.

Միջոցառման անվանումը՝«Մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող երիտասարդների ցերեկային խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայություններ»

Համառոտ բովանդակությունը՝ Սպասիրել մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների սոցիալական ներառումը՝ խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրման միջոցով, ձևավորել և զարգացնել շահառուների ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման հմտությունները, տրամադրել շահառուի կարիքին համարժեք որակյալ սոցիալ-հոգեբանական, սոցիալ-վերականգնողական աջակցություն, մասնագիտական կողմնորոշման և այլ ծառայություններ:

Հաշվետու ժամանակաշրջան՝ *Փետրվար-մարտ*

	Իրականացված գործողություններ				
	Գործառույթների նկարագիր (1)	Ակնկալվող արդյունքները (2)	Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթեր (3)*	Փաստացի մատուցած ծառայություններ (4)	Մեկնաբանություն (5)
	Մտավոր խնդիրներ ունեցող 55 շահառուների ցերեկային խնամքի ապահովում և սոցիալ-վերկանգնողական ծառայությունների մատուցում, որը ներառում է բազմամասնագիտական թիմի կողմից մատուցվող ծառայությունները՝ 1.Հատուկ մանկավարժի անհատական և խմբային պարապմունքներն իրականացվում են շաբաթական 5 օր, օրը՝ 7 ժամ, օրական միջինը 15-16 շահառուի հետ, ընդհանուր՝ 672 շահառու: Եռամսյակի ընթացքում իրականացվել է անհատական և խմբային ուսուցողական-շտկողական աշխատանքներ, որոնց նպատակն են եղել.	Շահառուների մոտ բավարար մակարդակով զարգացել է ճանաչողական ոլորտը, տարածական կողմնորոշման և ժամանակի ընկալման հմտությունները, ինչպես նաև ամրապնդվել է նրանց գրելու և կարդալու հմտությունները:	1.Մասնագետի և խմբավարի աշխատանքային գրաֆիկ 2.Շահառուների գբաղվածության բլանկ	Հատուկ մանկավարժի	Բացի ցերեկային խնամքի կենտրոնի հիմնական մասնագիտական աշխատանքից, իրականացվել և նաև հետևյալ միջոցառումները. 1. ցերեկային խնամքի կենտրոն են ընդունվել 3 շահառու՝ • Էլլա Գրիգորյան, • Արման Սաիլյան • Քրիստինե Մարգարյան, ով 2015թ հաճախել է ցերեկային կենտրոն,

	ա/զարգացնել շահառուների ճանաչողական ոլորտը, բ/պահպանել, ամրապնդել և զարգացնել առկա կարողություններն ու հմտությունները, գ/զարգացնել շարժունակության ոլորտը, տարածական կողմնորոշումը և ժամանակի ընկալումը, ինչպես նաև մտածողությունը, ուշադրությունը և հիշողությունը, գ/ամրապնդել ու զարգացնել գրելու և կարդալու հմտությունները				2016թ. թվականին բնակության վայրը փոխելու պատճառով դադարել է հաճախել, 2. տունայցի կազմակերպում-շահառու Քրիստինե Մարգարյանը 02.03.2021թ. վերադարձել է ցերեկային խնամքի կենտրոն, քանի որ ընտանիքը բնակություն է հաստատել Շենգավիթ համայքնում:
	2. Հատուկ հոգեբանի պարապմունքներն իրականացվում են շաբաթական 5 օր, օրը՝ 7 ժամ, օրական միջինը 14-16 շահառուի հետ, ընդհանուր՝652 շահառու: Եռամսյակային աշխատանքի նպատակներն են եղել. ա/հոգեկան գործընթացների (մտածողություն, հիշողություն, ուշադրության կենտրոնացում և այլն) զարգացում բ/հաղորդակցման հմտությունների զարգացում և ամրապնդում գ/հուզակամային ոլորտի խնդիրների հաղթահարում	Շահառուների մոտ հնարավորինս զարգացել են շփման և հաղորդակցման հմտությունները, իսկ հոգեկան գործընթացների կարգավորման ոլորտում անհրաժեշտ է շարունակական աշխատանքներ իրականացնել:	Հատուկ հոգեբանի		կենտրոնի մասնագետները՝ հատուկ հոգեբանը, սոցիալական աշխատողը և խմբի դաստիարակը կազմակերպել են տունայց՝ պարզելու և գնահատելու ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանները, վեր հանել առկա սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները ու գնահատել սոցիալ-տնտեսական պայմանները:
	3. էրգոթերապիստի անհատական և խմբային պարապմունքներն իրականացվում են շաբաթական 3 օր, օրը 4 ժամ, որից շաբաթական 1 օր խմբային միջինը՝ 18-20, 2 օրը անհատական միջինը՝ 8-10 շահառու, ընդհանուր՝ 716 շառահու:	Շահառուների մի մասը մասնագետի ուղղորդումների միջոցով կարողանում է կատարել պարզ կենցաղային գործողություններ	Էրգոթերապիստի		3.Շահառու Էլլա Գրիգորյանը ըստ բժշկական ախտորոշման ունի թեթև աստիճանի մտավոր հետամնացություն F-70, ըստ ծնողի «Ավան» ՀԱԿ

	Աշխատանքի նպատակներն են. ա/ինքնասպասարկման հմտությունների զարգացում և ամրապնդում, բ/կենցաղավարման հմտությունների զարգացում, գ/մանր մոտորիկայի զարգացում, գ/սոցիալական հմտությունների զարգացում:	/սեղան բացել-հավաքել, գնումներ կատարել խանութից, կոճկել հագուստի կոճակները, քուղակապերը/:			ՓԲԸ-ից ԲՍՓՀ չեն ուղղորդվել պատճառաբանելով, որ Է. Գրիգորյանի փաստացի առողջական վիճակը չի համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու չափանիշներին:
	4. Լոգոպեդի անհատական և խմբային պարապմունքներն իրականացվում են շաբաթական 3 օր, օրը 4 ժամ, որից շաբաթական 1 օր խմբային միջինը՝ 18-20, 2 օրը անհատական միջինը՝ 8-10 շահառու, ընդհանուր՝ 706 շահառու: Երամյակային աշխատանքի նպատակներն են. ա/խոսքի և բառապաշարի ակտիվացում, բ/խոսքի տեմպի և ռիթմի կարգավորում, գ/շնչառության երակարացմանն ուղղված վարժություններ:	Բավարար մակարդակով բարելավվել է. շահառուների բառապաշարը, կարգավորվել է խոսքի տեմպը և ռիթմը, սակայն ենթակա է շարունակական աշխատանքի:		Լոգոպեդի	4.Շահառուների ծնողներին կենտրոնի մասնագետների կողմից տրամադրվել է խորհրդատվություն: 5.Երամյակի ընթացքում սնունդ է տրամադրվել 55/1871 շահառուի: 6.Առավոտյան մարմնամարզություն-ֆիզկուլտուրա-յուրաքանչյուր օր ժ.10:20-10:30 շահառուները կատարում են մարզանք օրը բարձր տրամադրությամբ սկսելու համար:
	5. Սոցիալական աշխատանքի պարապմունքներն իրականացվում են շաբաթական 4 օր, 2 օրը՝ 4 ժամ, 2 օրը՝ 7 ժամ, միջինը 16-18 շահառու, ընդհանուր՝ 714 շահառու: Իրականացվել են խմբային և անհատական պարապմունքներ, որի ընթացքում զրույցներ են իրականացվել. ա/համավարակի պայմաններում և առհասարակ անձնական հիգիենայի կանոնների վերաբերյալ, բ/սոցիալիզացիայի զարգացման՝ մասնա-	Շահառուների մոտ զգալիորեն զարգացել է սոցիալիզացիան, ճանաչողական ոլորտը, ինչպես նաև ընտանեկան դերերի և մասնագիտությունների տարբերակման ու ճանաչողության ուղղությամբ անհրաժեշտ է շարունակել աշխատանք-		Սոցիալական աշխատողի	7.Փետրվարի 13-ին կենտրոնի շահառուների համար կազմակերպվել է «Տյարընդառաջ» ծիսական տոնը: 8.Շաբաթական մեկ օր

	վերապես հասցեների յուրացման և հեռախոսահամարների մտապահման ուղղությամբ, գ/բնական աղետների տեսակների, դրանց տարբերակման, պահպանման ու անվրտանգության կանոնների յուրացման ուղղությամբ, դ/իրավունքների և պարտականությունների յուրացում, ե/ընտանեկան դերերի յուրացում, ընտանիքի անդամների տարբերակում, զ/մասնագիտությունների և վերջինիս գործառույթների տարբերակում:	ները:			առանձնացված խմբերի ֆիլմերի դիտում համապատասխան շահառուների խմբային առանձնահատկությանը, ընտրվում են ֆիլմեր կամ հայկական մուլտֆիլմեր, որոնց ավարտից հետո խմբի դաստիարակը և հոգեբանը անցկացնում են հարցուպատասխան շահառուների հետ՝ հասկանալու, թե՞ որքանով են ընկալել ֆիլմը,
	6.Շահառուների առօրյա գործունեության մեջ առանձնապես կարևորվում է տարրուսումը, որն իրականացվում է խմբերի դաստիարակների կողմից: Դաստիարակների աշխատանքը շահառուների հետ իրականացվում է շաբաթական 5 օր, օրական 7 ժամ, միջինը 50 շահառու, ընդհանուր՝ 1871 շահառու: Եռամսյակային աշխատանքի նպատակներն են, ա/տարրուսուցում (տարրական թվաբանություն և գրաճանաչություն), բ/ճանաչողական ոլորտի ամրապնդում և զարգացում գ/մասնագետների և խմբավարների աշխատանքի ամրապնդում	Շահառուների մոտ ամրապնդվել է գրաճանաչությունը, շահառուների մի մասը ինքնուրույն կարողանում է կատարել թվաբանական գործողություններ, մյուս մասը են մանկավարժի օգնությամբ, զգալիորեն զարգացել է ճանաչողական ոլորտը, սակայն դեռ անհրաժեշտ է այդ ուղղությամբ աշխատանքները շարունակել:		Խմբի դաստիարակների	9.Կենտրոնում նշվում են շահառուների ծննդյան տոները՝ նրանց օրը դարձնելով ուրախ և հետաքրքիր, 10.Սպորտային կարողությունների ամրապնդման նպատակով դահլիճում կազմակերպվել են տարբեր շարժախաղեր: 11.Կենտրոնի ատամնաբուժարանը գործում է շաբաթական 3 օր: Փետրվար-մարտ ամիսներին իրականացվել է 23 շահառուների ատամնաբուժական ծառայությունը՝ հեռացման կամ բուժման

					միջոցով, ինչպես նաև ատամնաբույժները պարբերաբար անցկացրել և շարունակում են անցկացնել զրույցներ շահառուների հետ բերանի խոռոչի հիգիենայի վերաբերյալ:
	Ամենօրյա մատուցվող ծառայությունների մեջ կարևոր դերակատարում ունի շահառուների առօրյա զբաղվածությունը գործող խմբակներում, որոնք են՝ 1՝Հեռագործության տարբեր ոճեր խմբակի աշխատանքներն իրականացվում են շաբաթական 3 օր, օրը 5 ժամ, օրական 10-12 շահառու, ընդհանուր՝ 313: Եռամյակային նպատակներն են՝ ա/կարատեսակների ուսուցում բ/հեղինագործության հմտությունների ամրապնդում գ/շյուղերից օգտվելու հմտությունների ուսուցանում դ/.կանվայի լիցքակարման հմտությունների ամրապնդում:	Շահառուները բավարար մակարդակով տիրապետում են կարատեսակներին, հեղինագործության, շյուղագործության հմտություններինք, իսկ կանվայի լիցքաթափման հմտությունների ուղղությամբ շահառուների մի մասի հետ պետք է իրականացնել շարունակական աշխատանքներ:		Հեռագործության տարբեր ոճեր	
	2՝Մաքրամե և ապլիկացիա խմբակի պարապմունքներն իրականացվում են շաբաթական 2 օր, օրը 5 ժամ, որից 1,5 ժամը անհատական, իսկ 4 ժամը խմբային, օրական 10-12 շահառու, ընդհանուր՝ 187 շահառու: Աշխատանքի նպատակներն են. ա/թելերի մանր կտրատում բ/պատկերի եզրագծերի տարանջատում գ/գույների համադրում:	Մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդները մասնագետի օգնությամբ համադրում են գույները, տարանջատում են եզրագծերը և ինքնուրույն կտրատում են թելերը:		Մաքրամե ապլիկացիա	

	3.Նկարչության խմբակի աշխատանքներն իրականացվում են շաբաթական 5 օր, օրը 4 ժամ, օրական 15-16 շահառու, ընդհանուր՝ 630 շահառու: Իրականացված աշխատանքները նպատակ են ունեցել զարգացնել. ա/գունաճանաչողությունը, բ/ ջրաներկով աշխատելու կարողությունները, գ/ պատկերի եզրագծերի տարանջատման հմտությունները, դ/ գույների համադրման հմտությունները, դ/ազատ թեմայի շրջանակներում ինքնուրույն նկարելու կարողությունները, ե/շահառուների ստեղծագործական միտքը:	Շահառուների մի մասը տիրապետում է ջրաներկով աշխատանքի տեխնիկային, մյուսների հետ պետք է իրականացվեն շարունակական աշխատանքներ:Ինքնուրույն համադրում են գույները, տիրապետում են գունազարդման տեխնիկային, որի արդյունքում զգալիորեն զարգացել է շահառուների ստեղծագործական միտքը:		Նկարչություն	
	4.Դիզայնի պարապմունքներն իրականացվում են շաբաթական 5-օր, օրը 4 ժամ, օրական 12-14 շահառու, ընդհանուր՝ 588 շահառու: Իրականացված պարապմունքներն ուղղված են եղել. ա/ լեգալների տարբերակմանը, բ/մատիտից և մկրատից օգտվելու կարողության զարգացմանը, գ/գույների և գարդարանքների համադրմանն ու ձևավորմանը	Մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդները, ոմանք մանկավարժի օգնությամբ կարողանում են տարբերակել լեգալները, համադրել գույները, ինչպես նաև գարդարանքներով ձևավորել աշխատանքը, սակայն պետք է աշխատանքներն ուղղել նպատակի լիարժեք իրականացման համար:		Գեղագիտական ձևավորում/դիզայն/	
	5.Կավագործության աշխատանքներն իրականացվում են շաբաթական 5 օր, օրական 4 ժամ, միջինը 15 շահառու,	Շահառուները պատրաստել են տարբեր տեսակի աշխատանք-		Կավագործություն	

	ընդհանուր՝ 636 շահառու: Եռամսյակի ընթացքում իրականացված աշխատանքները ուղղված են եղել. ա/կավերի տեսակների ծանոթացմանը բ/զարդատուփերի պատրաստմանը գ/վզնոցների և մագնիսների պատրաստմանը	ներ, բավարար մակարդակով յուրացրել են կավի տեսակները՝ զարգացնելով աշխատանքային կարողություններն ու հմտությունները			
	6Համակարգչային խմբակի աշխատանքներն իրականցվում են շաբաթական 5օր, օրը 4 ժամ, օրական 12-14 շահառու, ընդհանուր՝ 613 շահառու: ա/Արեգակ օնլայն ծրագրի ուսուցանում, որն իր մեջ ներառում է ճանաչողական, տրամաբանական, վերլուծական, մտածողության զարգացմանն ուղղված վարժություններ:	Շահառուները հեշտությամբ օգտվում են նշված ծրագրից, պատասխանում են տրվող հարցերին՝ զարգացնելով մտածողությունը, հիշողությունը և տրամաբանությունը:		Համակարգչային տարրական գիտելիքների ձևավորում կամ զարգացում և մտավոր ունակությունները զարգացնող խաղեր	
	7Պար-ռիթմիկայի աշխատանքները կազմակերպվում են շաբաթական 3 օր, օրը 4 ժամ, օրական 18-20 շահառու, ընդհանուր՝ 532 շահառու: Աշխատանքի նպատակներն են. ա/Հայկական ժողովրդական «Ուզունդարա» և «Մշո Քոչարի» պարերի ուսուցանում բ/ ռիթմին համահունչ շարժումների հստակ յուրացում գ/պարային քայլերի հաջորդականության ապահովում դ/պարային բեմադրություններում շահառուների ներգրավում	Մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդները հաջորդական հստակ քայլերով պարում են հայկական ժողովրդական պարերը:		Պար և ռիթմիկա	
	8Թատերական խմբակի պարապմունքներն իրականացվում են շաբաթական 2 օր, օրը 3 ժամ, օրական 10-15 շահառու՝	Թատերական փորձերի ժամանակ շահառուները բավարար		Թատերական	

	կապված պատրաստվող թատերական ներկայացման հերոսների և թատերական բեմականացումներին անհրաժեշտ դերերի քանակի հետ, իսկ երկրորդային դերերի անհրաժեշտության հետ կապված՝ խմբակում ներգրավվում են ևս 10-12 շահառու, Աշխատանքի նպատակներն են. ա/սցենա՛րի վերանայում բ/դերերի բաշխում գ/ներկայացման փորձերի կազմակերպում	մակարդակով յուրացրել են դերերը:			
Ընդամենը շահառուներ՝ 55 /ըստ ծառայության տրամադրման՝ 1871					

Ազդեցությունը՝

1. Մտավոր խնդիր ունեցող շահառուն հատուկ դպրոցն ավարտելու հետո ապրում է ընտանիքում՝ չխանգարելով ընտանիքի առօրյա և աշխատանքային գործունեությանը:

2..Մտավոր խնդիրներ ունեցող շահառուն ունի կազմակերպված առօրյա, բարենպաստ պայմաններ և միջավայր ցերեկային խնամք ստանալու և հագեցած զբաղվածություն ունենալու համար:

3. Կենտրոնում շահառուն օգտվում է բազմամասնագիտական թիմի ծառայություններից, որոնք հնարավորություն են տալիս զարգացնելու շահառուների կենսական անհրաժեշտության հմտությունները՝ հաղորդակցման կարողություն, ինքնուրույնություն, սոցիալական հմտություններ:

4. Գործող խմբակներում զարգացնում են իրենց աշխատանքային կարողություններն ու հմտությունները, իսկ պարի և թատերական խմբակի միջոցով վեր են հանվում շահառուների նախասիրությունները արվեստի բնագավառում: Նշված կարողությունների ձևավորման արդյունքում մտավոր խնդիր ունեցող երիտասարդը կկարողանա ինտեգրվել հասարակական կյանք՝ հավասար պայմաններում հանդես գալով աշխատաշուկայում:

5. Շահառուների ձեռքի աշխատանքների ցուցադրությունը տարբեր ցուցահանդեսներում հնարավորություն կտա հանրությանը ծանոթանալ նրանց աշխատանքային կարողություններին և հմտություններին:

6. Կենտրոնի շահառուների կողմից կենտրոնի այգու բարեկարգման աշխատանքները կծառայի որպես աշխատանքային թերապիա նրանց համար:

7. Շատ ընտանիքներ դուրս կգան սոցիալապես անապահով ընտանիքների կարգավիճակից, քանի որ կենտրոնի՝ շահառուի զբաղվածությունն ու խնամքը ապահովելու հանգամանքը հնարավորություն կընձեռի ծնողին աշխատել և հոգալ ընտանիքի սոցիալական խնդիրները:

8. Ծնող-երեխա-մասնագետ համագործակցությունը հնարավորություն կտա շահառուին ստանալ կարիքին համապատասխան աջակցություն:

9.Պարբերաբար կազմակերպվող էքսկուրսիաների և մշակութային օջախներ այցելությունների արդյունքում կենդանի քարոզարշավի միջոցով հանրությունը կիրազեկվի մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների շփման կուլտուրայի մասին, ինչպես նաև շահառուները հնարավորություն կունենան իրենց մտավոր կարողությունների սահմաններում ծանոթանալ մշակութային արժեքներին:

10. Մասնակցությունը սպորտային փառատոներին և մրցույթներին հնարավորություն կտա զարգացնել մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների սպորտային կարողություններն ու հնարավորությունները, իսկ ստացած շնորհակալագրերն ու պատվոգրերը կխրախուսվեն հետագա սպորտային մրցումներին մասնակցության համար:

11. Կենտրոնի գործունեության վերաբերյալ համացանցում և լրատվամիջոցներով հրապարակումների արդյունքում կբարձրանա հանրության իրազեկման մակարդակը մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների աշխատանքային կարողությունների և հնարավորությունների մասին: